

**ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ**  
**2013 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

**Հարգելի՝ զորակոչիկներ**

Շնորհավորում եմ բոլորիդ զորակոչի առիթով և մաղթում, որ զալիք երկու տարիների ընթացքում ամրապնդվի հայրենիքի նկատմամբ ունեցած Զեր սերն ու նվիրվածությունը:

Հայրենիքը մեր տունն է, մեր ընտանիքը, մեր երեխաները, ուստի համոզված եմ, որ յուրաքանչյուրդ քաջ գիտակցում եք այս արժեհամակարգի առջև մատուցվող ծառայության կարևորությունը:

Օրեր առաջ մենք ազգովի տոնեցինք եռատոնը՝ հաղթանակ Հայրենական մեծ պատերազմում, Շուշիի ազատագրման տարեդարձ և Արցախի բանակի կազմավորման օր և յուրաքանչյուրս հպարտացանք ու խոնարհվեցինք այն նվիրյալների առջև ովքեր կերտել են այդ ձեռքբերումները, ուստի ցանկանում եմ Զեզ ուժ, եռանդ և տոկունություն, որպեսզի կարողանաք դառնալ տարածաշրջանի ամենամարտունակ բանակի արժանի զինվորը:

Կրկին շնորհավորում եմ և ցանկանում, որ կյանքի կարևորագույն դպրոցը ավարտեք գերազանցությամբ: Ամենայն բարիք եմ մաղթում բոլորիդ:

**Հարգանքներով**

 Կ.ՀԱՅՔԱԼԴՅԱՆ